ՀՈԴՎԱԾՆԵՐ СТАТЬИ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 40 ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ*

Վ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Ընթացիկ տարվա նոյեմբերի 29-ին լրանում է Հայաստանում Սովետական իշխանության հաստատման քառասնամյակը։

Դժվարին պայմաններում ստեղծվեց Սովետական Հայաստանը։ Պատերազմը, դաշնակների տեռորը, օտարերկրյա ինտերվենցիան ավերել էին երկիրը։ Նրա հնագույն ժողովուրդը, որն առանց այն էլ արդեն խիստ նոսրացել էր, գտնվում էր իսպառ բնաջնջվելու վտանգի տակ։

Հայաստանի աշխատավորները Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ իրենց ձեռքը վերցնելով երկրի ճակատագիրը, իրականացրին սոցիալիստական ռևոլյուցիան և, շնորհիվ Սովետական իշխանության հաղթանակի, հաստատեցին խաղաղության ու ստեղծագործական աշխատանքի հնարավորություն։ Սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում հայ ժողովուրդը երկար դարերի ընթացքում առաջին անգամ հնարավորություն ստացավ ծավալելու իր ստեղծագործական բոլոր ուժերը։ Սկսվեց բնական հարստությունների պլանաչափ շահագործումը։ Քառասուն տարում Հայաստանում ստեղծվեց ժամանակակից հզոր արդյունաբերություն, որն ընդգրկում է ծանր ինդուստրիայի այնպիսի ճյուղեր, ինչպես գունավոր մետալուրգիան, քիմիական արդյունաբերությունը, հաստոցաշինությունը և էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը։ Հսկայական զարգացում ստացավ ռեսպուբլիկայի էներգետիկ տնտեսությունը։

Մեքենաներ ու ժամանակակից սարքեր համարյա չտեսած երկրից Հայաստանը դարձել է բազմատեսակ մեքենաներ ու սարքեր արտահանող ռեսպուբլիկա։ Նրա ինստիտուտներում ու ձեռնարկություններում ստեղծվում և արտադրության մեջ են ներդրվում մեծ արագությամբ գործող էլեկտրոնային հաշվիչ մեքենաներ, ամենաբարդ գիտական սարքեր։

Շատ են առաջ գնացել սոցիալիստական գյուղատնտեսությունը, թեթև և սննդի արդյունաբերությունը։ Քառասուն տարում մի քանի անգամ աճել ու ամրապնդվել է Սովետական Հայաստանի բանվոր դասակարգը, որը Սովետական տերության փառապանծ բանվոր դասակարգի ջոկատներից մեկն է։ Ստեղծվել է սովետահայ ինտելիգենցիայի մեծ բանակ։

---

* *Սովետական Հայաստանի քառասնամյակին նվիրված Սովետական Միության, Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի Գիտությունների ակադեմիաների միացյալ հանդիսավոր նիստում կարդացած զեկուցումից։*

• *Նիստը կայացել է 1960 թ. հոկտեմբերի 25-ին, Երևանի Հայֆիլհարմոնիայի Մեծ դահլիճում։*

Ինչպես Սովետական Միության այլ ռեսպուբլիկաներում, Հայաստանում ևս տեսնում ենք կուլտուրայի իսկական ծաղկում և գիտության արագ զարգացում։

Հայաստանը այդ բոլոր նվաճումների համար պարտական է Սովետական Միության Կոմունիստական պարտիային և նրա մարտական ջոկատներից մեկին՝ Հայաստանի Կոմունիստական պարտիային, սովետական բոլոր ժողովուրդների եղբայրական օգնությանը և կոմունիզմի կառուցման համար պայքարող աշխատավորական լայն մասսաների հսկայական ստեղծագործական խանդավառությանը։

* * *

Գիտության զարգացումը Սովետական Հայաստանում ստեղծագործական այն հսկայական աշխատանքի արտահայտություններից մեկն է, որը ծավալվել է ռեսպուբլիկայում նրա գոյության քառասուն տարիների ընթացքում։

Հայ ժողովուրդը իր բազմադարյան պատմության ընթացքում, չնայած կյանքի չտեսնված դժվարին պայմաններին, աշխարհին տվել է բազմաթիվ ականավոր գիտնականներ և հետազոտողներ, որոնք գիտությունը հարստացրել են մեծարժեք աշխատություններով։ Հինգերորդ դարի պատմիչ Մովսես Խորենացու կլասիկ աշխատությունը ընդմիշտ կմնա որպես այդ դարաշրջանի գիտական մտքի առավել աչքի ընկնող կոթողներից մեկը։ Հայկական ճարտարապետության անմահ հուշարձանները վկայում են դրանց կառուցողների խոր գիտելիքների մասին՝ մեխանիկայի ու երկրաչափության բնագավառում։ Մաթեմատիկական գիտելիքների բարձր մակարդակի մասին են վկայում Անանիա Շիրակացու և Հայաստանի միջնադարյան մյուս մաթեմատիկոսների մինչև մեր օրերը պահպանված երկերը։

Սակայն ինքնուրույն պետականության կորուստը, օտարերկրյա նվաճողների տիրապետության բազմադարյան ժամանակաշրջանը և եկեղեցու մոլեգին խավարամտությունը առաջ բերին գիտական զարգացման արգելակում։ Արտասահմանյան հայկական գաղթավայրերի առաջացման և նույնիսկ որոշ զարգացման հետևանքով ստեղծվեց հայկական տպագրությունը, հրապարակ եկան աշխարհագրության ու բնագիտության վերաբերյալ մի շարք առավելապես կոմպիլյատիվ բնույթի գրվածքներ։ Սակայն ժողովրդի ստեղծագործական միտքը զարգացման լայն հնարավորություններ չուներ։

Միայն Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին XIX դարի սկզբներին հայ երիտասարդության առաջ զգալի հնարավորություններ բացեց գիտական կրթություն ստանալու, իսկ առանձին դեպքերում՝ նաև ստեղծագործական գիտական լայն աշխատանք կատարելու համար։ Ռուսաստանին միանալուց հետո է, որ մեծ դեմոկրատ ու լուսավորիչ Խաչատուր Աբովյանը և ապա ականավոր ռևոլյուցիոն-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը հրապարակ են գալիս խավարամտության դեմ, հանուն լուսավորության, հանուն գիտության։ Հայ երիտասարդության շարքերում ուժեղ ձգտում է սկսվում դեպի գիտությունը, դեպի համալսարանները։ Արդեն XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին ռուսական համալսարաններում մենք հանդիպում ենք Հայաստանից եկած առանձին գիտական աշխատողների։ Նրանց թվումն են հայտի հանքարան, Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Անդ-

ռեաս Արծրունին, որի անունով է կոչվում արծրունիտ միներալը, Կազանի համալսարանի պրոֆեսոր, բանասեր Ստեփանոս Նազարյանը, պատմաբան Ն. Ադոնցը։ Այդ խմբի մեջ պետք է դասել ռևոլյուցիայից առաջ իրենց աշխատանքը դեռ նոր սկսած, բայց միայն սովետական շրջանում հասունացած և որպես խոշոր գիտնականներ ձևավորված ակադեմիկոս Լ. Ա. Օրբելուն, բժիշկներ՝ պրոֆեսոր Մ. Ի. Աստվածատուրովին և Ա. Ս. Քեչեկին։

Սակայն բուն Հայաստանում գիտական աշխատանքի համար պայմանները շարունակում էին մնալ չափազանց աննպաստ։ Հայաստանի տերիտորիայում չկար ոչ մի բարձրագույն ուսումնական հաստատություն կամ գիտական հիմնարկ։

Հայաստանում Սովետական իշխանության հաստատումից հետո Երևանում իսկույն հիմնվեց Երևանի Պետական համալսարանը, որը դարձավ երիտասարդ ռեսպուբլիկայի գիտական մտքի առաջին օջախը։ Արագ կերպով աճող ժողովրդական տնտեսությունը պահանջեց հետագայում կազմակերպել տարբեր մասնագիտությունների բազմաթիվ կադրերի պատրաստումը։ Ուստի երևանյան թվականների սկզբից հիմնվեցին նոր բարձրագույն ուսումնական հաստատություններ, երևան եկան նաև առաջին գիտա-հետազոտական ինստիտուտները։ Հատկապես քանական և երևանյան թվականներին իր ծաղկմանն է հասնում գիտնական հայագետների, հետագայում Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամների փայլուն համաստեղության՝ Հրաչյա Աճառյանի, Ստեփանոս Մալխասյանցի, Մանուկ Աբեղյանի և Հակոբ Մանանդյանի գործունեությունը։ Նրանց գործունեության նշանակությունը հաճախ դուրս է գալիս հայագիտության սահմաններից։ Այդ հատկապես վերաբերում է խոշորագույն սովետահայ լեզվաբան, հայերենի յոթհատորանոց արմատական բառարանի, անձնանունների քառահատոր բառարանի, հայ լեզվի երկհատոր պատմության և 562 լեզվի համեմատությամբ հայերենի լիակատար քերականության բազմահատորյակի հեղինակ Հրաչյա Աճառյանին։ Շնորհիվ իր բացառիկ աշխատասիրության ու մեծ բարեխղճության, Աճառյանը կուտակեց ու մշակեց խիստ արժեքավոր գիտական նյութեր, որոնք մինչև այժմ էլ լուրջ հետաքրքրություն են ներկայացնում։

Նույն այդ ժամանակաշրջանում Ս. Պ. Դամբարյանի աշխատանքով ստեղծվում է հայ քիմիկոսների դպրոցը, իսկ ինժեներ Հ. Ա. Աստվածատրյանի ջանքերով՝ հայ հիդրոտեխնիկ-շինարարների դպրոցը։

Սովետական Հայաստանի առաջին երկու տասնամյակների ընթացքում ռեսպուբլիկայի երիտասարդ գիտական մտքի ուշադրությունը կենտրոնացած էր այն խնդիրների վրա, որ առաջադրում էին ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսությունը և հայ ժողովրդի կուլտուրայի զարգացման ընթացքը։

Ստեղծվող գիտական նոր հիմնարկներում աշխատում էին ինչպես Հայաստանի բուհերի սաները, այնպես էլ բարձրագույն կրթություն ստանալու համար մեր Հայրենիքի խոշորագույն գիտական կենտրոնները՝ Մոսկվա և Լենինգրադ գնացած երիտասարդությունը։ Երիտասարդ գիտական աշխատողներից շատերն այդ կենտրոններում ավարտեցին ասպիրանտուրաները։

Սակայն կյանքը գիտության անհամեմատ ավելի արագ վերելք էր պահանջում։ Անհրաժեշտ էր տեղական գիտական կադրերին օգնել գիտական աշխատանքն ավելի լայն չափերով կազմակերպելու գործում։ Այդ օգնությունը ցույց տրվեց ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալ (Արմ-

ֆան) կազմակերպելու միջոցով։ Արմֆանի առաջին նախագահն էր սովետական հայտնի երկրաբան, ակադեմիկոս Ֆ. Յու. Լևինսոն-Լեսինգը, որը շատ ժամանակ էր նվիրել ռեսպուբլիկայում կատարվող երկրաբանական հետազոտություններին։ Շուտով այդ պաշտոնում նրան փոխարինեց ակադեմիկոս Հովսեփ Արգարի Օրբելին, որը լավ հայտնի է Հայաստանի հնագիտության և լեզվաբանության վերաբերյալ իր փայլուն աշխատություններով։ Արմֆանի սիստեմում հումանիտար գիտությունների հետ միասին սկսեցին ավելի ինտենսիվորեն մշակվել քիմիան, բուսաբանությունը, կենդանաբանությունը, հողագիտությունը, բուսաբուծությունը։ Թույլ էին ներկայացված կամ համարյա չէին ներկայացված ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունները, սակայն այդ բնագավառում ուժեղացվեց կադրերի պատրաստումը։

Արդեն երկրորդ համաշխարհային պատերազմին անմիջապես նախորդած տարիներին փաստորեն նախապատրաստական աշխատանք էր կատարվում Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիա ստեղծելու ուղղությամբ։ Թեև Հայրենական պատերազմը պահանջեց մեր ժողովրդի բոլոր ուժերի լարում, Գիտությունների ակադեմիա ստեղծելու հարցը չհետաձգվեց։ ՍՍՌՄ Ժողովրդական Կոմիսարների Սովետի որոշումներով 1943 թվականի նոյեմբերին կազմակերպվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան։ Այդ լարված ժամանակաշրջանում Գիտությունների ակադեմիա կազմակերպելու մասին ընդունված որոշումը ամբողջ հայ ժողովուրդն ընկալեց որպես իր նվիրական երազանքների իրագործում, որպես ռեսպուբլիկայում գիտության զարգացման ուղղությամբ կատարված նախապատրաստական զգալի աշխատանքի արդյունք և որպես հայ ժողովրդի կուլտուրայի հետագա զարգացման գործում Կոմունիստական պարտիայի մեծ հոգատարության արտահայտություն։

Իրենց ռեսպուբլիկական Ակադեմիայի կազմակերպման ժամանակաշրջանը հիշելով, Հայաստանի գիտնականները մեծ երախտագիտությամբ են նշում այն վիթխարի աշխատանքը, որ ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիան կատարեց Հայաստանում գիտությունը զարգացնելու և անհրաժեշտ գիտական կադրեր դաստիարակելու ուղղությամբ։ Ռուս խոշորագույն գիտնականները գալիս էին Հայաստան և անմիջականորեն ղեկավարում մեր երիտասարդ գիտնականների հետազոտությունները։ Ոչ միայն մեր գիտական աշխատողները, այլև Հայաստանի բոլոր աշխատավորները լավ հիշում են ականավոր գիտնականներ Նիկոլայ Յակովլևիչ Մառին, Նիկոլայ Իվանովիչ Վավիլովին և Վլադիմիր Լեոնտևիչ Կոմարովին, որոնք Հայաստանում կատարած իրենց աշխատանքով առանձնապես նպաստեցին գիտության զարգացմանը։

Ակադեմիայի աշխատանքներն սկսվելու պահին ռեսպուբլիկայի գիտական կյանքի տարբեր ճյուղերում իրերի դրությունը կարելի է բնորոշել այսպես.

1) Հասարակական գիտությունների բնագավառում—խոշոր գիտնականների առկայություն, որոնք պատմության, լեզվի և գրականության հարցերի ուղղությամբ աշխատանք էին կատարում Սովետական Միության գիտական խոշորագույն դպրոցների մակարդակին մոտ մակարդակով։

2) Քիմիայի և երկրաբանության բնագավառում—երիտասարդ գիտնականների արագորեն աճող խմբի առկայություն, ընդ որում աշխատանքի ընդհանուր մակարդակն այն ժամանակ դեռևս զգալիորեն զիջում էր մեր Միության առաջավոր հիմնարկների մակարդակին։

3) Կենսաբանության և գյուղատնտեսական գիտության բնագավառում— գիտական հիմնարկների համեմատաբար լայն ցանցի առկայություն, առանձին փորձված աշխատողներով։

4) Ֆիզիկա-մաթեմատիկական ու տեխնիկական գիտությունների բնագավառում—երիտասարդ, դեռևս անփորձ աշխատողների չափազանց փոքրաթիվ խմբի առկայություն։ Այս երկու ուղղություններով ակադեմիան կազմակերպման շրջանում ուներ դեռ շատ թույլ երկու գիտական հիմնարկ՝ Ֆիզիկայի ինստիտուտը և Երևանում տեղավորված փոքր աստղադիտարանը։

Հաշվի առնելով իրերի այդ վիճակը և արդյունաբերության արագ զարգացումը, Գիտությունների ակադեմիան պետք է առաջին հերթին ուշադրություն դարձներ ֆիզիկա-մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների զարգացման վրա։ Եվ եթե այսօր Հայաստանի Գիտությունների ակադեմիայի գեմքը հիմնականում հենց այդ ուղղություններն են բնորոշում, ապա այդ նրանց զարգացման գծով վերջին 16 տարում կատարված համառ ու բեղմնավոր աշխատանքի արդյունքն է։ Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների այն ճյուղերի հենց միայն թվարկումը, որոնց ուղղությամբ ակտիվ հետազոտական աշխատանք է կատարվում, կարող է որոշ չափով բնութագրել գիտելիքների այդ բնագավառում գոյություն ունեցող դրությունը։ Հայաստանում ներկայումս մշակվում են տարբերական մասնիկների ֆիզիկայի, միջուկային ֆիզիկայի, տեսական ֆիզիկայի, աստրոֆիզիկայի, աստղաբաշխության, ռադիոաստղագիտության, ռադիոֆիզիկայի, մաթեմատիկայի, հաշվողական տեխնիկայի, կիբերնետիկայի, առաձգականության տեսության, պլաստիկության տեսության, հիդրոդինամիկայի և այլ հարցեր, ընդ որում այդ ճյուղերից շատերում աշխատանքը կատարվում է գիտական ճակատի ամենաառաջին գծում և հաճախ տալիս է հաջող արդյունքներ։

Այս կարևոր բնագավառում գիտական աշխատանքի մակարդակի ու հաջողությունների մասին է վկայում, իմիջիայլոց, նաև մի շարք փորձնական խոշոր տեղակայքների ստեղծումը, որոնցից շատերը եզակի են։ Այսպես, կոսմիկական ճառագայթներն ուսումնասիրելու համար ստեղծվել են խոշորագույն մագնիսային մասս-սպեկտրաչափներ։ Հայաստանում ներկայումս աշխատում է Միության մեջ ամենախոշոր ինտերֆերենցիոն ռադիոհեռադիտակը, որը ծառայում է ռադիոճառագայթման շատ թույլ դիսկրետ աղբյուրները դիտելու համար։ Տեղակայված են հզոր լայնանկյուն օպտիկական հեռադիտակներ՝ աստղաբաշխության գծով հետազոտություններ կատարելու համար։ Աշխատում են արագագործ ունիվերսալ-էլեկտրոնային հաշվիչ մեքենաներ։ Աշխատանքներ են կատարվում էլեկտրոնների օղակավոր արագացուցիչ կառուցելու համար, որը տալու է 6 միլիարդ էլեկտրոն-վոլտ էներգիայով մասնիկներ։

Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների ուղղությամբ ամենամեծ նվաճումը պետք է համարել կադրերի ստեղծումը, որոնք ընդունակ են ոչ միայն այդքան բարձր տեխնիկական մակարդակով հետազոտություններ կատարելու, այլ նաև նման տիպի ժամանակակից տեղակայքներ ստեղծելու։ Այսպես, վերոհիշյալ ինտերֆերենցիոն հզոր ռադիոհեռադիտակը ամբողջովին պատրաստվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի սարքաշինական լաբորատորիայի և Բյուրականի աստղադիտարանի ռադիոաստղագիտության բաժնի համատեղ ջանքերով։ Մեր ռեսպուբլիկայի գիտնականներն ու ինժեներները նախագծում ու կառուցում են հզոր էլեկտրոնային հաշվիչ մեքենաներ,

այդ թվում՝ ամբողջովին կիսահաղորդիչներով աշխատող մեքենաներ։ Մեր էլեկտրատեխնիկները ստեղծել են մաթեմատիկական մի մեծ մեքենա-անալոգ, որը թույլ է տալիս երևույթները մոդելացնել ու հետազոտել այնպիսի բարդ էլեկտրաէներգետիկ սիստեմներում, ինչպես Անդրկովկասի միացյալ էներգոսիստեմը և ուրիշները։ Էլեկտրոնների մեծ արագացուցիչի ֆիզիկական նախագծման ամբողջ աշխատանքը կատարվել է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Ֆիզիկայի ինստիտուտում։ Ենթադրվում է, որ հետագայում ևս պիտի ընդլայնվի սեփական ուժերով խոշոր էքսպերիմենտալ տեղակայքներ ու ժամանակակից ճշգրիտ սարքեր ստեղծելու պրակտիկան։ Դրան մեծ չափով պետք է նպաստի վերջին տարիներին Հայաստանում զգալի սարքաշինական արդյունաբերության ստեղծումը։

Ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսությունը բարձր պահանջներ է առաջադրում Հայաստանի բնական հարստությունները հետազոտելու ուղղությամբ։ Այդ պատճառով Գիտությունների ակադեմիան շարունակ ուշադրություն է դարձնում երկրաբանական հետազոտությունների զարգացման վրա։ Ընդսմին, բնականաբար ուշադրության կենտրոնում պետք է գտնվեն հանքային երկրաբանության պրոբլեմները, քանի որ Հայաստանի հանածո հարստությունների մեջ առավել արժեքավոր են հաղվագյուտ ու գունավոր մետաղների հանքավայրերը։

Գիտությունների ակադեմիայի երկրաբանների հետազոտությունների և երկրաբանական վարչության անցած տարիներին ծավալած մեծ աշխատանքների գլխավոր արդյունքն են հանքային և ոչ հանքային հանածոների հին հանքավայրերի արմատական վերագնահատումը և նոր, շատ հարուստ հանքավայրերի հայտնաղործումը։ Դրա հետևանքով Հայաստանը, չնայած իր տերիտորիայի փոքրությանը, դարձավ Սովետական Միության ամենահարուստ գանձարաններից մեկը։ Խոսքը վերաբերում է մոլիբդենի և ռենիումի հանքավայրերին, պղնձի երկրաբանական պաշարները մի քանի անգամ ավելացնելուն, ոսկու հանքավայրերին, նեֆելինային սիենիտների անսահմանափակ պաշարներին, որոնք մեր քիմիկոսների ու տեխնոլոգների համատեղ արդյունավետ ջանքերի ջնորհիվ շահավետ հումք են դարձել ալյումինի և քիմիական արդյունաբերության համար, խոսքը վերաբերում է քարաղի, մարմարի, տուֆերի, պեմզայի, պերլիտների հսկայական պաշարներին և այլն։

Այդ բոլոր հարստությունները հնարավորություն են տալիս ապագայում մի քանի անգամ ընդլայնելու գունավոր մետալուրգիան, շինարարական նյութերի արդյունաբերությունը և քիմիական արդյունաբերությունը։

Բնական է, որ Հայաստանում դեռ Գիտությունների ակադեմիայի ստեղծվելուց առաջ, լուրջ ուշադրություն է դարձվել քիմիական գիտության՝ որպես ժամանակակից քիմիական տեխնոլոգիայի հիմքի զարգացման վրա, որը բնական ռեսուրսներն ավելի լայն օգտագործելու հնարավորություններ է ընձեռում։ Ներկայումս Գիտությունների ակադեմիայի և ռեսպուբլիկայի Ժողովրդական Տնտեսության Խորհրդի սիստեմում աշխատում են չորս խոշոր քիմիական հետազոտական ինստիտուտներ, չհաշված ձեռնարկություններին առընթեր մի շարք ինքնուրույն լաբորատորիաները։ Մասնանշված ինստիտուտները կոմպլեկտավորված են բարձրորակ գիտնական քիմիկոսներով, որոնք աշխատում են անօրգանական քիմիայի, մասնավորապես սիլիկատների քիմիայի, օրգանական սինթեզի, պոլիմերների քիմիայի, կենսաբանորեն ակտիվ միացու-

թյունների, հաղվագյուտ տարրերի քիմիայի ընագավառում։ Գիտնական քիմիկոսները լուրջ ավանդ են մտցնում ոչ միայն մեր ռեսպուբլիկայի, այլև ամբողջ Միության քիմիական արդյունաբերության հետագա զարգացման մեջ։

Տեխնիկական գիտությունների ընագավառում պետք է նշել էներգետիկայի, էլեկտրատեխնիկայի, մաթեմատիկական մեքենաշինության, հիդրավլիկայի, հիդրոտեխնիկայի և շինարարական գործի ընագավառում կատարվող լայնածավալ հետազոտությունները։ Դրա հետ մեկտեղ, պետք է ասել, որ մեզ մոտ հետագայում առանձնապես պետք է ուշադրություն դարձնել այնպիսի ճյուղերի ծավալման վրա, ինչպիսիք են ռադիոտեխնիկան, կիսահաղորդիչների ուսումնասիրությունը և ավտոմատիկ կանոնավորման տեսությունը, որոնք հատկապես կարևոր են մեր արդյունաբերության նոր ճյուղերի համար։

Բիոլոգիական գիտությունների ընագավառում հետազոտություններն սկսվել էին դեռևս քսանական թվականներին։ Սկզբում նրանք կրում էին գրեթե բացառապես նկարագրական բնույթ, քանի որ հետազոտությունների նպատակն էր գլխավորապես ուսումնասիրել ռեսպուբլիկայի բուսական ու կենդանական աշխարհը։ Բիոլոգիական գիտությունների զարգացման այդ առանձնահատկությունը շարունակվում է նաև մինչև հիմա։ Սակայն, վերջին տարիներս ավելի ու ավելի են ուժեղանում էքսպերիմենտալ, այդ թվում նաև քիմիական ու ֆիզիկական մեթոդներով կատարվող հետազոտությունները։ Առանձնապես պետք է նշել բիոքիմիայի, բույսերի ֆիզիոլոգիայի և կենդանիների ֆիզիոլոգիայի, միկրոբիոլոգիայի և ռադիոբիոլոգիայի վերաբերյալ աշխատանքների զարգացումը։ Մեծ ուշադրություն է դարձվում կենդանի օրգանիզմների վրա տարբեր քիմիական կազմություն ունեցող նյութերի ներգործման պրոբլեմին։

Արդեն քսանական ու երեսնական թվականներին Հայաստանում ստեղծվեցին մի շարք գյուղատնտեսական փորձնական ու հետազոտական հիմնարկներ։ Ժամանակի ընթացքում փորձնական հիմնարկների բազայի վրա կազմակերպվեցին հողագործության, կենդանաբուծության, խաղողաբուծության և գինեգործության խոշոր գիտական ինստիտուտներ, ստեղծվեց նաև ագրոքիմիայի մեծ լաբորատորիա։ Այդ ինստիտուտների աշխատանքը սերտորեն կապված է պրակտիկայի պահանջմունքների հետ։ Այդ գիտական կազմակերպությունների աճմանը զուգընթաց նկատվում է նրանց գործունեության մեջ առավել նուրբ ֆիզիկա-քիմիական մեթոդներ ներդնելու ավելի լայն տենդենց, ինչպես նաև ավելի ու ավելի սերտ մոտեցում գյուղատնտեսական պրակտիկային։

Բժշկական գիտությունների ընագավառում նկատվում է նույն տենդենցը՝ ռենտգենոլոգիական, ռադիոբիոլոգիական, բիոքիմիական և ուրիշ ավելի նուրբ մեթոդների վրա հիմնված աշխատանքների ուժեղացում։ Քանի որ ժամանակակից բժշկության մեջ ֆիզիկական, քիմիական և կիբերնետիկական մեթոդների դերը շարունակ ուժեղանում է, ապա կասկած չկա, որ Հայաստանում արագ զարգացող ֆիզիկա-մաթեմատիկական ու քիմիական գիտությունների ներգործությունը կհանգեցնի բժշկական հետազոտությունների զգալի վերելքի ու նոր ծաղկման։

Անցնելով հասարակական գիտությունների զարգացման հարցին, պետք է նշել, որ մի ժամանակ ռեսպուբլիկայի հասարակական գիտությունների աշխատողների մի մասի մեջ տարածված էր այն սխալ կարծիքը, թե այդ գիտու-

թյունների ուղղությամբ աշխատանքները պետք է սահմանափակվեն միայն և կամ գլխավորապես հայագիտությամբ։ Դա նշանակում էր ամենափոքր դժվարությունների ուղիով ընթանալ, քանի որ հայագիտության բնագավառում մեզ մոտ կային պատրաստի տրադիցիաներ ու կադրեր։ Սակայն ռեսպուբլիկայի բուռն կերպով զարգացող տնտեսությունը պահանջեց ընդլայնել հետազոտությունները սոցիալիստական արդյունաբերության և գյուղատնտեսության էկոնոմիկայի բնագավառում։ Մասնավորապես, հաջող կերպով մշակվեցին կոնկրետ էկոնոմիկայի մի շարք հարցեր։ Սկսվեցին առաջին հետազոտությունները արևելագիտության ու փիլիսոփայության գծով։ Մեր հնագետների հաջողությունները նշանակություն ունեցան ոչ միայն հայագիտության, այլև ամբողջ Հին Արևելքի պատմության համար։ Հայկական արվեստի պատմությունը հետազոտողները սկսեցին ավելի մեծ ուշադրություն դարձնել ժամանակակից կիրառական արվեստի ու սովետական ճարտարապետության հարցերի վրա։

Այդ ամենը ոչ միայն չնվազեցրեց հայագիտական աշխատանքների նշանակությունը, այլ ընդհակառակը, հանգեցրեց հայագիտության բոլոր ճյուղերի, այդ թվում՝ Հայաստանի պատմությանը, հայոց լեզվին և նրա բազմաթիվ բարբառներին, հայ գրականությանն ու արվեստին նվիրված ուսումնասիրությունների իսկական ծաղկմանը։ Եթե մի ժամանակ արտասահմանում հայագիտության վերաբերյալ աշխատությունները որոշ չափով մրցում էին բուն Հայաստանի հայագետների հետազոտությունների հետ, ապա այժմ արտասահմանում կատարվում է հայագիտական հետազոտությունների միայն մի աննշան մասը։ Իսկ նրանց ճնշող մեծամասնությունը մարքսիստական-լենինյան առաջավոր դիրքերից կատարվում է Սովետական Հայաստանում։ Հենց այդ է մեր հայագետների անվիճելի ծառայությունը։

Այսպես, ուրեմն, եթե Սովետական Հայաստանի գոյության առաջին քսանամյակի ընթացքում մեզ մոտ ստեղծվեց գիտությունն իր ժամանակակից ձևերով, երևան եկան որակյալ գիտական կադրեր և ձեռք բերվեցին հետազոտական աշխատանքի առաջին հաջողությունները, ապա հաջորդ քսանամյակի ընթացքում, կիրառվող մեթոդների և խոր հետազոտությունների տեսակետից գիտությունը մի շարք ճյուղերում սկսեց մոտենալ համաշխարհային գիտության բարձր մակարդակին, այն միակ մակարդակին, որը վայել է սովետական գիտությանը։

Սակայն ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության ինչպես հին, այնպես էլ նոր, շատ առաջավոր ճյուղեր մեզանից պահանջում են գիտական հետազոտությունների է՛լ ավելի մեծ ծավալում, մեծ արտադրողականություն, է՛լ ավելի շատ գիտական արդյունքներ։ Ինչպես իրավացիորեն նշել է ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Ա. Ն. Նեսմեյանովը, գիտության մեջ, ավելի քան մարդու գործունեության որևէ այլ բնագավառում, արդարացի է այն կանոնը, թե պետք է հաղթել ոչ թե թվով, այլ հմտությամբ։ Առավել ևս այդ կանոնը արդարացի է այն հսկայական խնդիրների նկատմամբ, որոնք ծառացած են սովետական գիտության առջև առաջիկա 15—20 տարում։

Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը ստեղծել ու ստեղծում են բոլոր պայմանները, որպեսզի Հայաստանի գիտնականները հաջողությամբ մասնակցեն այդ խնդիրների լուծմանը։

* * *

Ինչպես արդեն հիշատակվեց, հասարակական գիտությունների բնագավառում գիտական աշխատանքն առաջին էտապում համակենտրոնանում էր Հայաստանի պատմության, գրականագիտության, հայոց լեզվի, հայկական արվեստի և այլ հարցերի շուրջը։ Հետագայում նոր կադրերի երևան գալու, նրանց գիտական մակարդակը բարձրանալու շնորհիվ սկսեցին մշակվել հայագիտության շրջանակներից դուրս եկող շատ հարցեր։

Սովետական իշխանության առաջին տարիներին գիտական ուժերը հավաքված էին գլխավորապես Երևանի Պետական համալսարանում։ Նրանց թվում կային մի շարք խոշոր գիտնականներ, որոնք իրենց գիտական պատրաստությունը ստացել էին Ռուսաստանում և արտասահմանում դեռևս ռևոլյուցիայից առաջ։ Նրանք բոլորը խանդավառությամբ դիմավորեցին այն լայն հնարավորությունները, որ Սովետական իշխանությունը տալիս էր գիտական աշխատանքի համար։ Նրանց հսկայական աշխատանքի արդյունքները, ինչպես կադրերի պատրաստման, այնպես էլ նոր հետազոտությունների բնագավառում, ցույց տվին, որ գիտության այդ գործիչները իրենց ամբողջ էներգիան նվիրել են Սովետական Հայրենիքին ծառայելու գործին։

Մեր ականավոր լեզվաբան Հրաչյա Աճառյանի կատարած աշխատությունների մեջ պետք է նշել երկհատոր «Հայոց լեզվի պատմությունը», յոթհատորանոց «Արմատական բառարանը» հայոց լեզվի զանազան, գլխավորապես արևմտահայ բարբառներին նվիրված մի շարք մենագրությունները, քառահատոր «Անձնանունների բառարանը» և շատ ուրիշներ։ 1953 թվականին մեզնից հեռացած այդ ականավոր գիտնականի էներգիան, աշխատասիրությունն ու բարեխղճությունը միշտ օրինակ են ծառայելու մեր գիտական երիտասարդության համար։

Այստեղ պետք է հիշել նաև ակադեմիկոս Ստեփանոս Մալխասյանցին, որը տվեց Մովսես Խորենացու նոր թարգմանությունը և կազմեց հայոց լեզվի մոնումենտալ քառահատոր բացատրական բառարանը, ակադեմիկոս Հակոբ Մանանդյանին՝ «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», «Ֆեոդալիզմը Հայաստանում» և այլ աշխատությունների հեղինակին, հայտնի պատմաբան Լեոյին, որը գրեց «Հայոց պատմություն» աշխատությունը երեք հատորով և Հայաստանում ազատագրական գաղափարների պատմությանը նվիրված երկհատորյակը, ակադեմիկոս Մանուկ Աբեղյանին՝ «Հայոց հին գրականության պատմության», գուսանական երգերին նվիրված հետազոտությունների և այլ աշխատությունների հեղինակին, Խաչիկ Սամվելյանին, Գարեգին Լևոնյանին, ակադեմիկոս Արսեն Տերտերյանին և ակադեմիկոս Գրիգոր Ղափանցյանին։

Ինչպես հայտնի է, ոչ բոլոր այդ գիտնականներին հաջողվեց կանգնել հետևողական մարքսիստական դիրքերում։ Այդ բանի վրա բազմիցս ուշադրություն է դարձրել մեր գիտական քննադատությունը։ Բայց նույնիսկ ամենախիստ քննադատները, իրավացիորեն նշելով այդ թերությունը, նախազգուշացրել են, որ չպետք է թերագնահատել այն հսկայական կոնկրետ արդյունքները, որոնք ստացվել են այդ գիտնականների աշխատություններում։ Գիտական հայագետների միայն հաջորդ սերնդին հաջողվեց ամբողջապես կանգնել հետևողա-

կան մարքսիստական-լենինյան դիրքերում, ավելի խոր վերլուծել բազմաթիվ կոնկրետ տվյալները և նրանց տալ տեսական պատշաճ բացատրություն, խուսափել, օրինակ, այնպիսի սխալներից, երբ, հետևելով բուրժուական պատմաբանների տրադիցիաներին, Հայաստանի պատմության ամենածանր շրջաններից մեկը՝ մեր թվականության V դարը բնորոշվում էր որպես հայկական կուլտուրայի ոսկեդար, մինչդեռ հայտնի է, որ հենց այդ ժամանակաշրջանում անկախությունից զրկված հայ ժողովուրդը ենթարկվել է չտեսնված տառապանքների, տանջվելով օտարերկրյա աշխարհակալների և սեփական շահագործողների դարշապարի տակ։

Ժամանակի ընթացքում այդ տեսակ սխալներն ավելի ու ավելի հազվադեպ էին դառնում, իսկ գիտական հետազոտություններն ավելի խորն էին վերլուծում հսկայական փաստացի նյութը, որ ձեռք էին բերել հայագետները լեզվի, գրականության, արվեստի ու պատմության ուսումնասիրման բնագավառում։

Մենք կարող ենք հաստատել, որ վերջին տարիների հայագիտական հետազոտությունները, որպես կանոն, արժեքավոր են ոչ միայն բազմաթիվ նոր փաստերի հայտնաբերման ու բացահայտման, այլև բարձր գաղափարա-տեսական մակարդակի իմաստով։

Լեզվաբանություն։ Խոշոր, գործնական ու գիտական նշանակություն ուներ ռուս-հայերեն և հայ-ռուսերեն մի ամբողջ շարք բառարանների ստեղծումը։ Հայոց լեզվի հետագա զարգացման համար առանձնապես խոշոր նշանակություն ունեցավ ռուս-հայերեն քառահատոր մեծ բառարանի հրատարակումը։ Ներկայումս հրատարակման համար պատրաստվում են ռուս-հայերեն և հայ-ռուսերեն մասնագիտական շատ բառարաններ։

Ակադեմիկոս Աճառյանի կազմած արժեքավորագույն բառարանների մասին արդեն վերևում խոսվեց։ Հայոց լեզվի մեծ, քառահատոր բացատրական բառարանը, որ կազմել է ակադեմիկոս Ստեփանոս Մալխասյանցը, մինչև այժմ հրատարակված հայերեն բոլոր բառարաններից ամենալիակատարն է։ Սակայն մեր լեզվաբանները չեն հանգստանում դրանով։ Սկսելով հայերեն բառերի՝ միլիոնավոր քարտերից բաղկացած հսկայական քարտարանի կազմումը, նրանք հույս ունեն հայոց լեզվի բառարանային ֆոնդի ուսումնասիրումը էլ ավելի բարձր մակարդակի հասցնելու։ Հատուկ ուշադրություն է նվիրվում հայոց լեզվի բարբառների ուսումնասիրմանը։ Հրապարակվել են առանձին բարբառներին նվիրված բազմաթիվ մենագրություններ։ Բարբառների ուսումնասիրման գործում, ակադեմիկոս Աճառյանի աշխատանքների հետ միասին, մեծ տեղ են գրավում ակադեմիկոս Ա. Ղարիբյանի և այլ հետազոտողների աշխատությունները։ Այդ հետազոտությունների զգալի արդյունքը եղավ գրականության մեջ մինչև այդ չարձանագրված քսանհինգ նոր բարբառների հայտնաբերումը։ Հայերեն բարբառների ուսումնասիրությունը, ինչպես պարզվել է, թույլ է տալիս ընդհանուր տեսական հետաքրքրություն ներկայացնող որոշ ընդհանրացումներ անել։

Վերջին տարիների ընթացքում կատարվել են հայերենի քերականության տարբեր հարցերին նվիրված բազմաթիվ լուրջ հետազոտություններ։ Նրանք մեծ նշանակություն ունեն մեր գրական լեզվի հետագա զարգացման համար։

Գրականագիտություն։ Անցած ժամանակաշրջանում կարևորագույն նվաճում է հայ գրականության պատմության ու տեսության վերաբերյալ մարքսիստական-լենինյան աշխատությունների աստիճանական ստեղծումը։ Գրականության մարքսիստական ըմբռնումն ու վերլուծումը պահանջում են կարևորագույն գրական երկերի ու գրականության պատմության վերաբերյալ ամբողջ նյութի մանրազնին ու խոր ուսումնասիրություն։ Ուստի բնական է, որ այդ ուղղությամբ ամենակարևոր քայլը պետք է լիներ հայ գրականության կլասիկների գիտական հրատարակությունը։ Ինչպես հայտնի է, ռևոլյուցիայից առաջ հայ կլասիկների հրատարակման գործի գրությունը լավ չէր։ Բավական է, օրինակ, հիշատակել, որ ռևոլյուցիայից առաջ ընթերցողին մատչելի է եղել մեծ դեմոկրատ, լուսավորիչ Խաչատուր Աբովյանի երկերի միայն մեկ հատորը, մինչդեռ վերջին տասնհինգ տարում Գիտությունների ակադեմիայի հրատարակած Աբովյանի երկերի ժողովածուն պարունակում է նույնպիսի ծավալով արդեն տասը հատոր։ Մեծ աշխատանք է կատարվել հայ կլասիկների երկերի տեքստարանական մանրամասն ուսումնասիրության ուղղությամբ, որը օգնել է մեծ բարձրության հասցնելու մեր կլասիկների հրատարակությունների որակը։ Որպես օրինակ կարելի է հիշատակել Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի տեքստին նվիրված մի շարք մանրակրկիտ հետազոտությունները։

Աբովյանի երկերի հրատարակությունների հետ միասին աչքի ընկնող տեղ է գրավել բոցաշունչ ռևոլյուցիոն-դեմոկրատ Նալբանդյանի երկերի, Պռոշյանի, Ռղայանի, Հովհաննես Թումանյանի, Հովհաննես Հովհաննիսյանի, Րաֆֆու, Վահան Տերյանի, Մուրացանի, Նար-Դոսի և այլ հեղինակների գրվածքների գիտական հրատարակությունը։ Իհարկե, այդ աշխատանքը դեռևս չի կարելի կատարյալ համարել, քանի որ մի կողմից շարունակում են երևան գալ նոր արխիվային նյութեր, իսկ մյուս կողմից կատարելագործվում են տեքստարանական հարցերի վերլուծման մեթոդները։ Այդ կապակցությամբ չի կարելի չնշել նաև Գրականության և արվեստի թանգարան ստեղծելու ահագին նշանակությունը, որտեղ պահվում են հայ գրականության կլասիկների թողած ձեռագիր գանձերը։

Կլասիկների հրատարակությունը, իր հերթին, խթան ծառայեց նրանց ստեղծագործությանը նվիրված նոր քննադատական հետազոտությունների երևան գալուն։ Որպես օրինակ մատնանշենք, որ վիպասան Րաֆֆու երկերի տասհատորանոց ժողովածուն հրատարակելուց հետո երևան եկան նրա ստեղծագործության տարբեր կողմերը լուսաբանող զգալի քանակությամբ աշխատություններ։

Դրական փաստ պետք է համարել այն հսկայական ուշադրությունը, որ մեր գրականագիտությունը նվիրել է ժամանակակից հայ գրականությանը։ Մանրամասն քննարկման են ենթարկվել սովետահայ գրականության ականավոր վարպետների ստեղծագործությունները, սկսած Հակոբ Հակոբյանից, Ավետիք Իսահակյանից ու Եղիշե Չարենցից և վերջացրած հետպատերազմյան սերնդի երիտասարդ գրողներով։ Երևան են եկել բանաստեղծության, ժամանակակից դրամատուրգիայի, պրոզայի և այլ առանձին հարցերին նվիրված մենագրություններ։

Այդ բոլորի հետ միաժամանակ լուրջ ուշադրություն է նվիրվել հին և միջնադարյան հայ գրողների հրատարակմանն ու ուսումնասիրմանը։ Առանձին

ուշադրություն է դարձվել Եղիշեի, Գրիգոր Նարեկացու, Ֆրիկի, Քուչակի և մյուսների երկերին։ Մի քանի անգամ հրատարակվել են հայ մեծ բանաստեղծ Սայաթ-Նովայի բանաստեղծությունները գիտական մեկնաբանություններով։ Անդրկովկասի բոլոր երեք լեզուներով՝ հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն գրված նրա երկերը, որոնք հեղինակի խոր հումանիզմի մասին են վկայում և հավասարապես հարազատ են Անդրկովկասի ժողովուրդներին, արժանի են հետագայում ևս ամենամանրամասն հետազոտման։

Բարձր գնահատական է ստացել ակադեմիկոս Ա. Կարինյանի «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության» կապիտալ աշխատությունը։ Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Անդրկովկասի և Հայաստանի բոլշևիկյան մամուլի պատմությանը նվիրված բազմաթիվ աշխատությունները։

Գրականագետների կատարած հետազոտությունների մեջ աչքի ընկնող տեղ է գրավում աշխարհի բոլոր ժողովուրդների և, ամենից առաջ, ռուս մեծ ժողովրդի և Հայաստանի հետ հնագույն կապերով կապված Վրաստանի ու Ադրբեջանի եղբայրական ժողովուրդների հետ հայ ժողովրդի ունեցած գրական ու կուլտուրական կապերի պրոբլեմը։ Հրապարակված են մի շարք մենագրություններ, որոնք նվիրված են հայ գրականության զարգացման վրա առանձին ռուս գրողների և հրապարակախոսների ունեցած ազդեցությանը։ Հատուկ ուշադրություն է հատկացված այն ռուս գրողներին ու բանաստեղծներին, որոնք իրենց գործունեության ընթացքում սերտորեն կապված են եղել Հայաստանի հետ, աջակցել են հայ-ռուսական գրական կապերի ամրապնդմանը, ինչպես օրինակ, Մ. Գորկին, Վ. Բրյուսովը և ուրիշներ։

Սովետահայ գրականագիտության համար բնորոշ է այն մեծ ուշադրությունը, որ հատկացվում է ժողովրդական ֆոլկլորին, ժողովրդական էպոսին, զրույցներին և ժողովրդական ասացվածքներին։

Բոլորին հայտնի է, որ «Սասունցի Դավիթ» հայկական հերոսական էպոսի հազարամյակը դարձավ համաժողովրդական տոնակատարություն, որին, բացի հայ գրականության գործիչներից, մասնակցեցին բոլոր եղբայրական սովետական ռեսպուբլիկաների գրողները։ Հրատարակվել են այդ էպոսի բազմաթիվ պատումները, ինչպես և այդ պատումների ուսումնասիրմանը նվիրված հետազոտություններ։ Մանրակնին բազդատումից հետո հրատարակվել են մեր էպոսի վերջնական տեքստը և նրա ռուսերեն թարգմանությունը։ Կատարված է հայկական հեքիաթները ժողովելու և ուսումնասիրելու ահագին աշխատանք. արդեն հրատարակվել են ժողովրդական ստեղծագործության այդ բազմահատոր ժողոված ի երկու հատորը։ Պետք է առանձնապես նշել հայկական առածների հավաքման ու սիստեմավորման վերաբերյալ հսկայական աշխատանքը։

Ներկայումս Հայաստանի գրականագետները իրենց գլխավոր ուժերը կենտրոնացրել են սովետական շրջանի հայ գրականության ուսումնասիրման վրա։ Բացի սովետական առանձին գրողներին նվիրված մենագրություններից, որոնց մի մասն արդեն տպագրվել է, իսկ մյուս մասը լույս կտեսնի հետագայում, պատրաստվում է սովետահայ գրականության պատմության վերաբերյալ հավաքական մեծ աշխատությունը։

Արվեստագիտություն։ Քառասուն տարվա ընթացքում արվեստագիտության զանազան հարցերից ավելի մանրամասն մշակման են ենթարկվել երաժշտության, թատրոնի պատմության և կերպարվեստների պատմու-

թյան հարցերը։ Խոշորագույն հայ կոմպոզիտորներ Կոմիտասին, Սպենդիարյանին են նվիրված մի ամբողջ շարք հետազոտություններ։ Հսկայական նշանակություն ունի հայկական միաձայն երաժշտության վերաբերյալ պրոֆեսոր Քուշնարյանի աշխատությունը։ Լուրջ ուշադրության են արժանի հայկական օպերայի պատմության վերաբերյալ հետաքրքիր աշխատանքները։

Ինչպես հայտնի է, հայկական թատրոնն ունի երկհազարամյա պատմություն։ Հետաքրքրական է նաև նոր ժամանակի և, հատկապես, սովետական շրջանի հայ թատրոնի պատմությունը։ Այդ պատճառով էլ մեր արվեստագետների մի մեծ խումբ զբաղվում է թատրոնի պատմությամբ։ Խոշորագույն հայ արտիստներ Հ. Աբելյանին, Սիրանույշին և մյուսներին են նվիրված առանձին մենագրություններ։ Կատարվել են սովետահայ դրամատիկ թատրոնի պատմությանը, հայկական օպերայի պատմությանը նվիրված հետաքրքիր ուսումնասիրություններ։

Բազմաթիվ աշխատություններ են նվիրվել հայկական ինչպես հին ու միջնադարյան, այնպես էլ նոր ճարտարապետության հարցերին, որը ամենաբարձր ծաղկման է հասել սովետական ժամանակաշրջանում։ Մեր ճարտարապետների ստեղծագործությունը, սկսած Հռիփսիմեի վանքի ու Զվարթնոցի կերտողներից և վերջացրած Ալեքսանդր Թամանյանով ու ժամանակակից սովետական ճարտարապետներով, դարձել է բազմաթիվ հետաքրքիր ուսումնասիրությունների առարկա։

Նկարչության պատմության բնագավառում արվեստագետները կատարել են մի շարք մենագրական ուսումնասիրություններ, նվիրված նորագույն ժամանակի տաղանդավոր հայ նկարիչներին, ինչպիսիք են Գևորգ Բաշինջաղյանը, Եղիշե Թադևոսյանը, Մարտիրոս Սարյանը, Հակոբ Կոջոյանը։ Աշխատանքներ են կատարվում կիրառական այնպիսի արվեստների պատմության վերաբերյալ, ինչպիսին են գորգագործությունը, գեղարվեստական կերամիկայի և ապակու արտադրությունը և այլն։

Պատմագիտություն և ճնագիտություն։ Հասարակական գիտությունների սիստեմում պատմությունը և հնագիտությունը կարևորագույն տեղերից մեկն են գրավում։ Այդ դիսցիպլիններին են նվիրված մեր գիտնականների շատ աշխատություններ։ Վերը խոսվեց ակադեմիկոս Հ. Մանանդյանի աշխատությունների մասին։ Նրա աշխատություններից հետո խոշոր քայլ հանդիսացավ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի հրապարակած Հայաստանի պատմության դասագիրքը, որն առաջին անգամ շարադրվել է՝ ելնելով հետևողական մարքսիստական դիրքերից։

Մեծ ուշադրություն է նվիրվել զանազան սոցիալական շարժումներին, որոնք առաջացել են Հայաստանի պատմության ամենատարբեր ժամանակաշրջաններում։ Այսպես, հրապարակվել են Հայաստանի պավլիկյանների և Ցոնդրակեցիների շարժումներին նվիրված աշխատություններ։ Ակադեմիկոս Արշավիր Հովհաննիսյանի գրչին են պատկանում Հովսեփ Էմինին և XVIII դարի վերջերի հայ ազատագրական շարժմանը նվիրված աշխատությունները։ Նրան, ինչպես և ուրիշ մի ամբողջ շարք գիտնականներին ենք պարտական այն աշխատանքների համար, որ նրանք կատարել են Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու հարցի շուրջը։ Այդ կարևորագույն իրադարձությունը շարունակում է այժմ ևս գրավել պատմաբանների ուշադրությունը, քանի որ դա հսկայական պրոգրեսիվ նշանակություն է ունեցել հայ ժողովրդի ճակատագրի

համար։ Բնական է նույնպես, որ մեծ ուշադրություն է դրավել Ռուսաստանին միանալուն նախորդած ժամանակաշրջանի հայ-ռուսական հարաբերությունների պատմության պրոբլեմը։ Այդ հետազոտությունները թույլ տվին երևան հանել այն ամենահարուստ նյութերը, որոնք վկայում են, որ հայ հասարակության բոլոր դասակարգերի մեջ արդեն XVII—XVIII դարերում վճռականորեն գերակշռել է ռուսական կողմնորոշումը։ Հայաստանի՝ Ռուսաստանին միանալու պահից սկսած հայ ժողովուրդը սկսում է մասնակցել Ռուսաստանի բոլոր ժողովուրդների համատեղ պայքարին ընդդեմ ինքնակալության և ընդդեմ բուրժուա-կալվածատիրական հասարակարգի։ Բնական է, որ պատմաբանների ուշադրությունն այստեղ կենտրոնանում է գյուղացիական շարժման վրա, իսկ ավելի ուշ ժամանակաշրջանին անցնելիս բանվորական շարժման ծագման ու զարգացման վրա։ Որպես օրինակ կարելի է բերել այն հետազոտությունը, որ նվիրված է Հայաստանը Ռուսաստանին միանալուն անմիջականորեն հաջորդած ժամանակաշրջանին։ Դա ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանի «Դեկաբրիստները Հայաստանում» աշխատությունն է։ Այդ աշխատության մեջ լուսաբանվում են դեկաբրիստների հումանիստական աշխարհայացքի շատ մանրամասնությունները, նրանց մեծ համակրանքը ճնշված ժողովուրդների և, մասնավորապես, Հայաստանի ճնշված ժողովրդի նկատմամբ։

Անցյալ դարի 60-ական և 70-ական թվականների հասարակական հոսանքների ուսումնասիրությանն է նվիրված ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի աշխատությունը Միքայել Նալբանդյանի մասին։

Առանձին աշխատությունների մեջ մանրամասնորեն լուսաբանված են մարքսիստական կազմակերպությունների պատմությունը XIX դարի վերջին և առաջին ռուսական ռևոլյուցիայի ժամանակաշրջանում։ Առանձնապես մեծ ուշադրություն է նվիրվել Հայաստանում Սովետական իշխանության հաստատման պատմությանը, ինչպես նաև Հայաստանի Կոմունիստական պարտիայի գործունեությանը անցած 40 տարում։

Բազմաթիվ աշխատություններ են նվիրված բոլշևիկյան պարտիայի խոշորագույն գործիչներ Սպանդարյանին, Շահումյանին, Կնունյանցին, Մյասնիկյանին, Կամոին (Տեր-Պետրոսյանին), ռևոլյուցիոն շարժման ականավոր այլ գործիչներին, Հայաստանում տեղի ունեցած Մայիսյան ապստամբության հերոսներին, մեր երկրում սոցիալիզմի կառուցման համար մղվող պայքարի կազմակերպիչներին։

Հայաստանի պատմության հին և միջնադարյան ժամանակաշրջանի խոր ուսումնասիրության համար կարևորագույն նշանակություն ունեն հնագիտական պեղումները։ Անցած 40 տարում Հայաստանի տարբեր շրջաններում կարևորագույն պատմական օբյեկտների շատ ինտենսիվ պեղումներ են կատարվել։

Այդ օբյեկտների թվին են պատկանում այնպիսի հին հուշարձաններ, ինչպես Գառնու հին բերդը, Արագածի լանջերին կառուցված Համբերդ ամրոցը, Դվին միջնադարյան մայրաքաղաքը։ Այդ բոլոր պեղումները շատ հարուստ արդյունքներ են տվել և պատմական գիտությունը հարստացրել են նոր կարևոր տվյալներով։ Պեղումների օբյեկտներից մի քանիսը գիտությանը հայտնի դարձան միայն սովետական ժամանակաշրջանում։ Դրանք են, օրինակ, Թեյշեբաինի (Կարմիր-բլուր) ուրարտական բերդը, Արինբերդ ապարանքը, Լճաշենի դամբարանները և շատ ուրիշներ։ Այդ հուշարձաններից մի քանիսի

հետազոտությունները համաշխարհային հռչակ են ձեռք բերել և ահագին գեր են խաղացել հայ ժողովրդի և Ուրարտական պետության պատմության հարցերի լուծման տեսակետից։ Պեղումների ճիշտ պլանավորման ու կատարման գործում հսկայական ծառայություն են մատուցել ակադեմիկոս Հ. Օրբելին, Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից անդամ Բ. Պիոտրովսկին, պատմական գիտությունների դոկտոր Կ. Ղաֆադարյանը։ Հնագիտական պեղումների կատարման թափը հասել է այնպիսի մակարդակի, որի մասին մինչև ռևոլյուցիան չէր էլ կարելի երազել։ Կատարված աշխատանքի արդյունքներն այնքան արժեքավոր են, որ արդարացնում են այդ հետազոտությունների հետագա է՛լ ավելի ընդլայնումը։

Հնագիտական պեղումների, ինչպես նաև մշակույթի մյուս հուշարձանները գիտականորեն հետազոտելու և վերլուծելու համար մեծ նշանակություն ունի Պատմական թանգարանը, որ ստեղծվեց ու մեծ զարգացում ստացավ Սովետական իշխանության տարիներին։ Այնտեղ պահվում են Հայաստանում բարե դարի ժամանակաշրջանին, բրոնզե դարին, Ուրարտական պետությանը, Հայաստանի հին, միջնադարյան և նոր պատմությանը վերաբերող առարկաներ։ Թանգարանի աշխատակիցները մեծ չափով տիրապետում են այդ հուշարձաններն ուսումնասիրելու նոր, առավել հուսալի մեթոդներին։ Ներկայումս Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմական թանգարանը Սովետական Միության ամենահետաքրքիր պատմական թանգարաններից մեկն է։

Տնտեսագիտություն։ Վերջին տարիները ավելի ու ավելի մեծ նշանակություն են ձեռք բերում ռեսպուբլիկայում կատարվող տնտեսագիտական հետազոտությունները։ Արդեն կատարված աշխատանքների թվին են պատկանում Հայաստանի XIX դարի, ինչպես նաև սովետական ժամանակաշրջանի տնտեսական զարգացման պատմությանը վերաբերող աշխատությունները։ Գրված են մենագրություններ ու հոդվածներ, որոնք վերաբերում են Հայաստանում տնտեսագիտական մտքի զարգացման պատմությանը։ Սակայն տնտեսագիտական հետազոտությունների մեջ առավել արժեքավոր են այն աշխատությունները, որոնք նվիրված են Սովետական Հայաստանի տնտեսության զարգացման ընթացիկ հարցերին ինչպես նախապատերազմյան, այնպես էլ հետպատերազմյան ժամանակաշրջաններում։ Այդ աշխատանքների մեջ պետք է ամենից առաջ նշել Սևան-Հրազդան կասկադի ամբողջ պրոբլեմի տնտեսական մասի մշակումը։ Հայկական ՍՍՌ ԳԱ Տնտեսագիտության ինստիտուտում կատարվել են արդյունաբերության զարգացման առանձին պրոբլեմներին նվիրված հետազոտություններ։ Այսպես, օրինակ, Գիտությունների ակադեմիայի քիմիկոսները մշակել են Հրազդանի շրջանի նեֆելինային սիենիտների օգտագործման նոր, տեխնոլոգիապես առաջադեմ ու շահավետ եղանակ, իսկ Տնտեսագիտության ինստիտուտը մշակել է բարդ արդյունաբերական այն կոմպլեքսի ամբողջ էկոնոմիկան, որ ստեղծվում է Հրազդանի շրջանում։ Տնտեսագիտության ինստիտուտը շատ ջանքեր է նվիրել Հայաստանում մեքենաշինության զարգացման, կապիտալ ներդրումների արդասավորության, արդյունաբերական սարքավորումը ճիշտ օգտագործելու և այլ հարցերին։

Կոմունիզմի նյութա-տեխնիկական բազան ստեղծելու ժամանակաշրջանում, երբ մեր պետության սոցիալիստական հասարակարգի պայմաններում նոր արտադրական հարաբերությունների հիմքի վրա զարգացող տնտեսությու-

նը հիմնվում է գիտության և տեխնիկայի ամենավերջին նվաճումների վրա, որոնցից շատերը դեռևս չեն օգտագործվում կապիտալիստական երկրներում,— տնտեսագիտական հետազոտությունների նշանակությունն զգալիորեն աճում է։ Միայն ժողովրդական տնտեսության զարգացման նոր, չուսումնասիրված ուղիների խոր գիտական վերլուծությունը կարող է ամուր հիմք ծառայել արդյունաբերության, տրանսպորտի և գյուղատնտեսության զարգացման պլաններ ստեղծելու համար։ Այդ վերլուծության մեջ զգալի դեր պետք է խաղան քանակական հարաբերակցությունների հետազոտությունները, մի բան, որ հնարավոր չէ առանց նուրբ և երբեմն բարդ մաթեմատիկական մեթոդների կիրառման։ Ուստի մեր տնտեսագետները պարտավոր են լայնորեն օգտագործել ժամանակակից մաթեմատիկայի և հաշվողական տեխնիկայի մեթոդները։ Այդ մեթոդները պետք է կիրառվեն ոչ միայն վիճակագրական տվյալները վերլուծելիս, այլև պլանավորման մեթոդները մշակելիս, ինչպես նաև տնտեսության տարբեր ճյուղերը կոնկրետ ձևով պլանավորելիս։ Նրանք մեծ նշանակություն են ձեռք բերում նաև նոր արտադրություններ նախագծելիս և նոր արդյունաբերական կոմպլեքսներ ստեղծելիս։ Դժբախտաբար մեր ռեսպուբլիկայում այդ ուղղությամբ աշխատանքը դեռ նոր է սկսվում։ Պետք է ցանկանալ, որ նա ամենաարագ զարգացում ստանա։

Գիտության զարգացման ամենակարևոր պայմաններից մեկն էլ, ինչպես հայտնի է, տարբեր մասնագիտությունների գծով գիտական ամսագրերի ստեղծումն է։ Հասկանալի է, որ ռևոլյուցիայից առաջ խոսք անգամ չէր կարող լինել Հայաստանում որևէ գիտական հանդեսի կանոնավոր հրատարակման մասին։ Հենց որ Սովետական Հայաստանում կազմակերպվեցին առաջին գիտական հիմնարկները ու բարձրագույն ուսումնական հաստատությունները, առաջին անգամ երևան եկան պարբերական ու ոչ-պարբերական գիտական տպագիր օրգաններ։ Սակայն այդ գործը անհրաժեշտ կարգավորման հասավ միայն ռեսպուբլիկայում Գիտությունների ակադեմիա կազմակերպվելուց հետո։ Ներկայումս Գիտությունների ակադեմիան տպագրում է մի շարք գիտական հանդեսներ և ձգտում է, որ նրանցից յուրաքանչյուրն ունենա իր որոշակի դեմքը։ Այդ պարբերականներում տպագրվում են ոչ միայն հայ գիտնականների, այլև եղբայրական ռեսպուբլիկաների շատ գիտական աշխատողների հոդվածները։ Կանոնավոր կերպով լույս տեսնող գիտական հանդեսի օրինակ կարող են ծառայել Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Զեկույցները»։ Գիտությունների ակադեմիան հիմնվելու պահից մինչև հիմա լույս է տեսել այդ հանդեսի 150 համար։ Նրա ծավալն ավելի ու ավելի է ընդլայնվում։

Կասկած չկա, որ ամենամոտ տարիներում մենք կունենանք ռեսպուբլիկայում հրատարակվող գիտական հանդեսների քանակի ու ծավալի հետագա աճ, որն արտացոլում է գիտական հետազոտությունների անշեղ ընդլայնումը։

* * *

Ներկա ակնարկի նպատակն այն չէր, որ տայինք Սովետական Հայաստանում գիտության պատմության թեկուզ համառոտ ուրվագիծը, և ոչ էլ այն, որ լիովին բնութագրեինք Հայաստանի գիտական աշխատողների մտցրած տվանդը սովետական և համաշխարհային գիտության մեջ։ Մեր նպատակն էր միայն բնութագրել, մեծ մասամբ առանձին օրինակներով, գիտական աշխա-

տանքի թափն ու մակարդակը ռեսպուբլիկայում։ Ներկայումս Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայում ստեղծված է գիտության ու տեխնիկայի պատմության խորհուրդ։ Մեզ թվում է, որ այդ խորհրդի կարևորագույն խնդիրը պետք է լինի Սովետական Հայաստանում գիտության զարգացման պատմության մանրամասն ուսումնասիրումը փաստական տվյալների մանրաղնին հետազոտման վրա։ Դա շատ դժվար խնդիր է, քանի որ գիտական հետազոտությունների թափն ու բազմազանությունը շարունակ մեծանում են։ Գիտությանը առաջադրվող պահանջներն օրեցօր աճում են, և ինչպես էլ լինեն հետագա զարգացման կոնկրետ պլանները, նրանք անկասկած իրենց լայնությամբ աննախընթաց են լինելու։

Տիեզերական թռիչքների և կիբերնետիկայի մեր դարում հիմնական գիտական հայտնագործությունները նրանց գործնական կիրառումից բաժանող ժամկետները խիստ կրճատվել են։ Գիտական մեծ հայտնագործության արմատավորումը կյանքում, իր հերթին, նոր պահանջներ է առաջադրում գիտությանը և հարկադրում արագացնել գիտական պրոբլեմների լուծման տեմպերը։ Դրա հետևանքով, մենք պետք է նախատեսենք գիտության շարունակ արագացող զարգացումը ժամանակակից հասարակության մեջ։ Ամենամոտիկ տասնամյակներում գիտության զարգացման տեմպերը հատկապես արագ պետք է լինեն մեր երկրում, որն իր առջև կոմունիզմի կառուցման խնդիրն է դրել։ Այդ նշանակում է, որ անցյալում համեմատաբար փոքր նյութական միջոցներ պահանջող գիտությունը այժմ կսկսի պետության նյութական միջոցների ավելի ու ավելի նկատելի մասը կլանել։ Ճիշտ է, դա կլինի միջոցների ամբողջովին արդարացված ներդրում, քանի որ դրանք ժողովրդին կվերադարձվեն վերադրով։ Սակայն ակներև է դառնում, որ այդ միջոցների ավելի ռացիոնալ ծախսումը, այսինքն՝ գիտության լավագույն պլանավորումը անհամեմատ ավելի մեծ էֆեկտ կտա։ Ընդսմին խոսքը, իհարկե, վերաբերում է ոչ միայն մեր ռեսպուբլիկայի մասշտաբով, այլ նաև ամբողջ Սովետական Միության մասշտաբով գիտության զարգացման պլանավորմանը։

Մեր մեծ երկրում առաջին անգամն է սկսվել գիտական հետազոտությունների պլանավորումը։ Այդ պլանավորումը օգնեց մեզ գիտության շատ բնագավառների համենաարագ զարգացման գործում։ Սակայն գիտության պլանավորման խնդիրները այսօր առանձնապես բարդացել են միմյանց զուգահեռ ընթացող երկու հակադիր պրոցեսների, այն է՝ դիսցիպլինների մասնագիտացման և նրանց փոխներթափանցման հետևանքով։ Ավելի ու ավելի շատ առաջին պլանի վրա են դրվում այն պրոբլեմները, որոնք մի շարք դիսցիպլինների ներկայացուցիչների համատեղ աշխատանք են պահանջում։ Այս ամենի հետևանքով ինքը՝ գիտության պլանավորումը խոր գիտական մոտեցում է պահանջում։ Հետևաբար, պետք է զարգացնել գիտության պլանավորման գիտությունը, ընդ որում այդ գիտության մեջ մոտեցումը տարբեր դիսցիպլինների պլանավորման նկատմամբ կարող է և պետք է միանգամայն տարբեր լինի։

Կասկած չկա, որ գիտության պլանավորման սկզբունքը սովետական գիտնականներին թույլ կտա հետագայում ևս ապահովել զարգացման արագ տեմպի և նոր, էլ ավելի աչքի ընկնող հաջողությունները։ Ուստի մենք հավատացած ենք, որ առաջիկա նոր տասնամյակները կհանգեցնեն գիտության հսկայական ընդլայնմանն ու նոր ծաղկմանը Սովետական Միության բոլոր ռեսպուբլիկաներում և այդ թվում՝ Սովետական Հայաստանում։